

3839

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ

Am

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
21-րդ ՏԱՐԵԴԱՐՁԸ

(Զեկուցում Մոսկվայի երկրորդի հանդիսավոր
ճիտում 1938 թ. նոյեմբերի 6-ին)

9(47) 1917
Մ-86

ԳԵՏԶՐԱՏ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԳՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1938

30 JUL 2011

Պալեստինե բոլոր յերկրների, միացե՛ք

24 JAN 2006

9(47)1917


U-86

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ

Այ

ՀՐԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ 21-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

(Զեկուցում Մոսկվայի կոմիտեի հանդիսավոր
նիստում 1938 թ. նոյեմբերի 6-ին)



~~13454~~

896

1938

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ԳՐԱԳՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ © 1938

04 JUL 2013



6377
35

4836-91

В. М. МОЛОТОВ
21-ая ГОДОВЩИНА
ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ

Армгиз—Издательство
полит. литературы
Ереван, 1938

Ընկերնէ՛ր. մեկ տարի սրանից առաջ մենք հպարտությամբ տոնեցինք Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխության քսանամյակը: Այդ 20 տարվա ընթացքում ստեղծվել է մի լավ տրադիցիա՝ անչեղորեն, տարեցտարի առաջ շարժվել մեր ժողովրդական տնտեսության զարգացման գործում, ժողովրդական մասսաների բարեկեցության ու կուլտուրայի վերելքի գործում և սոցիալիստական շինարարության մյուս բոլոր բնագավառներում:

Հոկտեմբերյան Հեղափոխության 21-րդ տարին լավ է նրանով, վոր հետևելով այդ պանծալի տրադիցիային, նա մի նոր, խոշոր քայլ արեց դեպի առաջ՝ սոցիալիստական պետության բոլոր ներքին ուժերի ամման գործում և Խորհրդային Միության միջազգային հեղինակության հետագա ամրապնդման գործում:

Քսանմեկ տարի սրանից առաջ ազատագրվելով կապիտալիզմի շղթաներից, մեր յերկրի բանվորներն ու գյուղացիներն անսահմանափակ հնարավորություններ ստացան, վորպեսզի իրենց համար ստեղծեն ազատ, ապահովված, կուլտուրական, յերջանիկ կյանք: Դա տեղի յե ունենում այնպիսի մի ժամանակաշրջանում, յերբ կապիտալիզմի յերկրներում բուրժուազիայի ճնշումը, բռնակալ Փաշիստների տեռորիստական դիկտատուրան և նոր խմբերիստական պատերազմի հրահրումն ավելի ու ավելի մեծ թափ են ընդունում, ավելի ու ավելի մեծ վտանգ են դառնում:

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության 21-րդ տարեգարձն իր գործերով, սոցիալիզմի յերկրում իր տարած նոր հաղթանակներով վկայում է, վոր վոչ մի այն մեր ժողովրդի, այլև մյուս յերկրների ժողովուրդներին համար սոցիալիստական հեղափոխությունը հանդիսանում

ե միակ ճշմարիտ ճանապարհը, վորը տանում է դեպի ազատագրում՝ կապիտալիզմի ճնշումից, Փաշիզմի ճնշումից, նոր արյունահեղ իմպերիալիստական պատերազմներից: Վորքան էլ ուժեղ լինի Փաշիզմի ճնշումը, վորքան էլ բանվորներն ու բոլոր աշխատավորները ճնշված լինեն Փաշիստական դարչապարի տակ, կարելի յե վստահությամբ ասել, վոր այնտեղ ևս, Փաշիզմի յերկրներում, կապիտալիզմի յերկրներում, աշխատավորության լայն մասսաների մեջ ավելի ու ավելի յե հասունանում այն միաքը, թե ճիշտ է դեպի ազատություն, խաղաղություն ու յերջանիկ կյանք տանող մեր խորհրդային ուղին: (Մափանաբուքյուններ):

Ի. ԽՍՀՄ ՆԵՐՔԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Այդ է վկայում ամենից առաջ ԽՍՀՄ ներքին զարգացման ամբողջ ընթացքը:

Վոր կողմն էլ նայես, մեր ժողովրդական տնտեսության մեջ տեղի յե ունենում առաջընթաց: Այդ չի նշանակում, վոր մեզ մոտ տնտեսության հետամնաց ճյուղեր չկան: Կան և այդպիսիք: Մենք ստիպված ենք լինում հատուկ միջոցներ ձեռք առնել հետ մնացող ճյուղերի վերաբերմամբ: Բայց ժողովրդական տնտեսության մեջ մեր զարգացման հիմնական դիժը խոսում է ինքն իր մասին՝ նա արտադրում է Խորհրդային Միության ուժերի անչեղ վերելքը և հուժկու աճումը:

Ինչպես հայտնի յե, վնասարարները վոչ մի ջանք չեյին խնայում, վորպեսզի վիժեցնեն մեր արդյունաբերության և տրանսպորտի վերելքը: Նրանք դիտեյին, վոր հարվածում են պետության ամենազգայուն նյարդը: Դրա համար եր, վոր ոտարերկրյա հետախուզություններն այդպես համառորեն դեպի այդ դործն էյին դրդում իրենց գործակալներին:

Սակայն, յեթե նրանց հաջողվեց էլ այստեղ կամ այնտեղ արգելակել մեր աշխատանքը, ապա նրանց ուժերից վեր է կանգնեցնել մեր արդյունաբերության ու տրանսպորտի վերելքը: Փաստերը վկայում են այդ ամենահամոզիչ կերպով:

Այս տարի, առաջին տասն ամսվա ընթացքում՝ համե-

մատած անցյալ տարվա համապատասխան ժամանակաշրջանի հետ, մենք ունենք խոշոր արդյունաբերության վերելք 12,5 տոկոսով: Այդ նշանակում է, վոր ընթացիկ տարվա հունվարից մինչև նոյեմբեր, անցյալ տարվա համապատասխան 10 ամիսների համեմատությամբ, միայն խոշոր արդյունաբերության դժով մեր արտադրանքն ավելացել է 7 միլիարդ 150 միլիոն ուրբով: Համեմատեցեք այդ փաստը նրա հետ, վոր արդյունաբերական արտադրանքի տարեկան միջին աճումն առաջին հնգամյակի ժամանակաշրջանում հասել էր ընդամենը 5 և կես միլիարդ ուրբով: Այսպիսով, մեր արդյունաբերության հաջող առաջընթացը միանգամայն ակնբախ է: Մենք պետք է աշխատենք, վոր այս տարվա մնացած յերկու ամսում այդ աճն ավելացնենք դարձյալ մեկ-յերկու միլիարդ ուրբով:

Յեթե մեր արդյունաբերությունն ազատ է կրիզիսներից և տարեցտարի նորանոր քայլեր է կատարում դեպի առաջ, ապա այդ չի կարելի ասել կապիտալիստական յերկրների արդյունաբերության մասին: Բայց ասել է մատնանշել, վոր վերջին ութը տարվա ընթացքում կապիտալիստական յերկրների արդյունաբերությունը յերկրորդ կրիզիսն է ապրում: Առաջին կրիզիսը տևեց 1929 թվի կեսերից մինչև 1933 թվի վերջը, այսինքն՝ ավելի քան 4 տարի, ընդգրկելով, թեպետև չափազանց անհամաչափորեն, բոլոր կապիտալիստական պետությունները: Այդ ամենածանր կրիզիսը վերջանալուց հետո անցավ ավելի քան յերեք տարի, և 1937 թվին նոր կրիզիս սկսվեց մի շարք կապիտալիստական յերկրների արդյունաբերության մեջ: Այդ կրիզիսը շարունակվում է նաև այս տարի, ընդգրկելով, թեպետև տարբեր չափով, կապիտալիստական յերկրների մեծամասնությունը: Ամբողջ կապիտալիստական արդյունաբերության մակարդակը նույնիսկ 1937 թվին, յերբ նոր կրիզիսը նոր էր միայն սկսվել, ընդամենը յերեք տոկոսով էր գերազանցում այդ արդյունաբերության 1929 թվի մակարդակից: Դա այն ժամանակ, յերբ Խորհրդային Միության արդյունաբերության արտադրանքը 1937 թվին համարյա չորս անգամ գերազանցում էր մեր արդյունաբերության 1929 թվի արտադրանքի չափից:

Այս փաստերը զաղափար են տալիս, թե վորքան տարբեր է կապիտալիստական յերկրների արդյունաբերութեան դրութիւնը՝ համեմատած Խորհրդային Միութեան արդյունաբերութեան դրութեան հետ:

Հոկտեմբերյան հեղափոխութիւնը մեր արդյունաբերութիւնը դուրս բերեց այնպիսի ճանապարհ, վորի մասին յերազել միայն կարող է այլ յերկրի՝ հայրենիքը սիրող քաղաքացին:

Այդ նշանակում է, վոր վոչ մի վնասարար չէր կարող և չի կարող խանդարել մեր արդյունաբերութեան վերելքին ու նրա ծաղկմանը: Այդ նշանակում է, վոր մեր ստախանովականուհիներն ու ստախանովականները, մեր ազնիվ տնտեսավարներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները զիտեն, թե դեպի ուր պետք է տանել գործը, կարողանում են պայքարել հանուն սոցիալիստական արդյունաբերութեան վերելքի, կարողանում են հաղթահարել այդ ճանապարհին ծառայած բոլոր ու ամեն տեսակ խոչընդոտները:

Մեր գյուղատնտեսութեանն այս տարի վորոչ զժվարութիւնների հանդիպեց, Պոլոթիւնում և նրան հարևան միջանի մարզերում առաջացած ամառային յերաշտի կապակցութեամբ:

Չնայած դրան, հացահատիկային կուլտուրաների ընդհանուր բերքն ավելի բարձր է, քան 1936 և 1935 թվերին և միայն մի փոքր է պակաս անցյալ տարվա համախառն բերքից, յերբ մենք ռեկորդային բարձր բերք ունեցինք:

Թե վորքան է ամրապնդվել մեր գյուղատնտեսութիւնը, յերևում է նաև հետևյալից՝ հացահատիկի մթերումն այս տարի ընթանում է անցյալ տարվա մակարդակով, յերբ մենք բարձր բերք ունեցինք բոլոր շրջաններում: Կարող եմ հավաստիացնել ձեզ, ընկերներ, վոր մեր պետութիւնն այնքան է ասպնդոված հացով և մեր սրաչարներն այնքան մեծ են, վոր այժմ մեզ համար սարսափելի չէ վոչ մի յերաշտ ու վոչ մի այլ տեսակ անահնկալ: (Բառն ծափահարութեամբ):

Վոչ միայն հացահատիկի գծով, այլ և՛ բամբակի, և՛ ճակնդեղի, և՛ գյուղատնտեսական այլ կուլտուրաների գծով

մենք այժմ լեհաստար վստահութեամբ ասպնդում ենք պետութեան բոլոր պահանջները:

Մեր յեբեղում կոլտնտեսութիւնները, կոլտնտեսային կարգը՝ իր ամբողջ նոր տեխնիկայով ու նոր կազմակերպութեամբ, այնպիսի պայմաններ են ստեղծել գյուղատնտեսութեան վերելքի և կոլտնտեսականները կյանքի բարելավման համար, վորոնց մասին նախկին գյուղացին յերազել անգամ չէր կարող: Զուր չէ, վոր մեր արդյունաբերութեան մեջ և շինարարութիւններում այժմ հաճախ բանվորների պակաս է զգացվում: Գյուղի կյանքը, համեմատած անցյալի հետ, շատ ավելի ասպնդոված, բազմապատիկ ավելի կուլտուրական ու գրախիչ է դարձել:

Ժողովրդական տնտեսութեան վերելքը, արդյունաբերութեան և կոլտնտեսային արտադրութեան վերելքը կազմում են Խորհրդային Միութեան մասսաների բարեկեցութեան աճման հիմքը: Այդ է վկայում նաև ապրանքաշրջանառութեան աճումը:

1938 թվի առաջին տասն ամսվա ընթացքում՝ անցյալ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատութեամբ, մեր ապրանքաշրջանառութեանն աճել է 8,5 տոկոսով: Այդ կազմում է ապրանքաշրջանառութեան ավելացում համարյա 9 միլիարդ ռուբլով: Աճումը փոքր չէ: Բայց այնուամենայնիվ մենք չենք կարող ասել, վոր այդ մեզ համար բախարար աճում է:

Ամեն մեկը գիտե, վոր պարենամթերքի տեսակետից մեղանում այժմ պակաս չկա, ինչպես այդ գոյութիւնն ունի դեռ միջանի տարի սրանից առաջ: Այդ խնդիրը մենք գլուխ բերինք և գլուխ ենք բերում ավելի ու ավելի հաջողութեամբ:

Այլ բան է արդյունաբերական մյուս ապրանքների վերաբերմամբ: Այստեղ պակասը դեռ քիչ չէ: Մենք համառորեն աշխատում ենք, վորպեսզի շուտով գլուխ բերենք նաև այդ կարևոր խնդիրը:

Բայց հետաքրքիր է այստեղ ևս մեր դրութիւնը համեմատել կապիտալիստական պետութիւններում յեղած իրերի դրութեան հետ:

Դուք արդեն լսեցիք, վոր 1929 թվից մինչև 1937 թիվն

արդյունաբերութեան արտադրանքը բոլոր կապիտալիստական յերկրներում, միասին վերցրած, ավելացել է ընդամենը յերեք տոկոսով, իսկ այս տարի, աճող տնտեսական կրիզիսի պատճառով, արդյունաբերական ապրանքների արտադրութեան մակարդակը ըստ սահմաններից դուրս գալիս յորեն ավելի ցածր է նույնիսկ 1929 թվի մակարդակից: Յեւ այնուամենայնիվ բուրժուական մամուլն արտասահմանում այնտեղի ապրանքի պակասի մասին չի գրում: Դժվար չէ հասկանալ, թե այդ ինչու յե այդպես լինում: Յեթե աշխատավորների աշխատավարձն աճեր և վոչ թե նվազեր, այնտեղ անխուսափելիորեն կաճեր պահանջը և ապրանքի պակաս կզգացվեր: Բայց այնտեղ այդպիսի բան չկա: Այնտեղ աճում է գործազուրկների բանակը, այնտեղ բուրժուական կտրում է բանավորների աշխատավարձը, այնտեղ կրճատվում են գյուղի հասարակ աշխատավորների յեկամուտները և այդ պատճառով, ապրանքի պակասի փոխարեն, կապիտալիստական յերկրներն ապրում են պահանջի պակաս և ապրանքի սպառման ճգնաժամ:

Մեր յերկրում մենք ունենք հակառակ դրութիւն: Բանավորների աշխատավարձը և գյուղացիների յեկամուտներն արագորեն աճում են: Արդյունաբերական ապրանքների արտադրութեան ասպարեզում մենք չենք հասնում աճող պահանջի հետևից: Այդ, իհարկէ, մեզ համար արդարացում չէ: Մենք պետք է սովորենք հասնել այդ պահանջի հետևից, մենք պետք է շատ ավելի արագորեն զարգացնենք մեր արդյունաբերութիւնը, շատ ավելի արագորեն ավելացնենք լայն սպառման ապրանքների արտադրութիւնը, պետք է զարգացնենք վոչ միայն խոշոր ու միջակ, այլև մանր, ինչպես նաև անայնպէս յարկաւ ձեռնարկութիւնները, վորոնք կտվելացնեն անհրաժեշտ արդյունաբերական ապրանքների բանակը: Մենք պետք է ավելի լավ կազմակերպենք արդյունաբերական ապրանքների արտադրութիւնը քաղաքում և գյուղում: Այն ժամանակ բանավորների ու ծառայողների աշխատավարձի աճումը և կոյտնտեսականների յեկամուտների աճումն ապրանքի պակաս չի առաջացնի մեր շուկաներում: Մենք կարող ենք և պետք է գլուխ բերենք այդ խնդիրը կարճ ժամանակամիջոցում:

Բայց ով չգիտէ, վոր կապիտալիստական պետութիւններում, վորտեղ խոսակցութիւն չկա առևտրի ասպարեզում ապրանքի պակասի մասին, — այդ՝ աշխատավորութեան բարեկեցութեան ցուցանիշը չէ, այլ ընդհակառակը — այդ՝ աշխատավոր մասսաների աղքատութեան ու աղքատացման ցուցանիշն է:

Մեզ մոտ այլ բան է: Մեր յերկրում միայն անցյալ տարի բանավորների աշխատավարձն ավելացել է 10,5 միլիարդ ռուբլով: Աճում են նաև կոյտնտեսականների յեկամուտները: Մենք կարող ենք ուրախանալ մեր յերկրում բանավորների և գյուղացիների բարեկեցութեան աճամբ: Բայց դրանից հետևում է, վոր մեր խնդիրն է՝ աշխատավորութեան այդ աճող յեկամուտներին ընդառաջ շարժել ինչպես արդյունաբերական, այնպես և սարենային ապրանքների լայն արտադրութիւնը:

Մեր ներքին զարգացումն իր հիմնալի արտահայտութիւնն է դառնում նաև քաղաքական բնադավառում:

Հոկտեմբերյան Հեղափոխութեան 21-րդ տարին այդ տեսակետից հապկապես նշանակալից է: Բավական է հիշել Միութեան Գերագույն Սորհրդի և հանրապետութիւնների Գերագույն Սորհուրդների ընտրութիւնները: Կոմունիստները և անկուսակցականների բոլին այդ ընտրութիւններում փայլուն հաղթանակ տարավ, վորի մեծ նշանակութիւնը մեզ բոլորիս համար հասկանալի յէ: Այդ բոլիւ Լենինի-Ստալինի կուսակցութեան դրոշի տակ համախմբեց աշխատավորութեան ամբողջ մասսային՝ ամբողջ ժողովրդի 98—99 տոկոսը: (Բուռն ծափահարութիւններ):

Հանրապետութիւնների Գերագույն Սորհուրդների ընտրութիւնները, վորոնք տեղի ունեցան Միութեան Գերագույն Սորհրդի ընտրութիւններից կես տարի հետո, ցույց տվին, վոր քաղաքական վերելքը մեր յերկրում չի թուլանում, այլ աճում է:

Մենք ասացինք, վոր մինչև Հոկտեմբերյան Հեղափոխութեան քսանամյակի ժամանակները բարոյական ու քաղաքական ամուր միասնութիւն է ստեղծվել սոցիալիզմ կառուցող մեր ժողովրդի մեջ: Մենք տեսնում ենք, վոր ընթացիկ տարում ժողովրդի բարոյական ու քաղաքական

միասնությունն ամբաստնողիկէ և մեծ ուժ ե դարձել: (Բուռն ծափահարություններ):

Դրանով ե բացատրվում, վոր քաղաքի և գյուղի աշխատավորների մեջ աճում են պանծալի ստախանովականների ու ստախանովականուհիների շարքերը, վոր յերիտասարգությունից և խորհրդային ինտելիգենցիայի նոր խավերից ավելի ու ավելի արագորեն աճում են կուլտուրայի, տեխնիկայի, դիտության ու արվեստի հիանալի աշխատողներ: Մենք պետք ե միայն սովորենք ավելի լավ կազմակերպել նրանց աշխատանքը, ավելի լավ աջակցել արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրական շինարարության, տեխնիկայի ու գիտության բոլոր առաջավոր աշխատողներին, ամեն կերպ ոգնել նրանց նախաձեռնության զարգացմանը:

Մեր որերը հարուստ են աշխատանքի մեջ, բնության նվաճման գործում, հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերված հերոսության հիանալի որինակներով: Այնպիսի մարդիկ, ինչպես Պապանինը և պապանինականները, հիանալի ուղաչուներ Կոկիլինակին և Բրյանդինակին, վորոնք բոլորին շրջերին իրենց խիզախությամբ, այնպիսի հիանալի ողաչուհիներ, ինչպես Վալենտինա Գրիգորովան, Պոլինա Ոսիպենկոն և Մարինա Ռասկովան, Խորհրդային Պրիմորյեյի պանծալի պաշտպանները, վորոնց անունները մեզ բոլորիս համար ամենամոտիկ անուններն են դարձել, սրանք բոլորն ել ժողովրդական մասսաների սիրելին են դարձել: (Բուռն ծափահարություններ):

Իսկ թե վո՞րքան սրտեր են վառել այդ մարդիկ իրենց որինակով, հայրենիքին իրենց ցույց տված նախնականությամբ, իրենց անձնագո՞հ հերոսությամբ, մենք կիմանանք հետո միայն, վաղվա իրադարձությունների ժամանակ:

Յե՛վ հիանալի ստախանովականները՝ սոցիալիստական աշխատանքի հերոսները, և՛ Արկտիկայի ու ավիացիայի պանծալի հերոսները, և՛ հայրենիքի պաշտպան հերոսները, և՛ հենց նրանց թվի աճումը, և՛ նրանց որինակի վարակող ուժն աշխատավորության լայն խավերի մեջ, — այս բոլորը վկայում ե, վոր Խորհրդային Միության ժողովուրդները նոր, իսկապես հիանալի կյանք են ապրում:

Այդ կյանքը ստեղծել ե Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը:

Ժողովուրդը փառաբանում ե իր հերոսների նորանոր անունները, հերոսներ, վորոնք իրենց աշխատանքով, դիտելիքներով ու սիրագործությամբ փառաբանում են մեր հայրենիքը:

Յե՛վ այդ բոլորի մեջ յերևում ե մեր մեծ բուլլեիկյան կուսակցության ու նրա առաջնորդ ընկեր Ստալինի առաջատար ու ժողհեշնջող կամքը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ):

II. ՄԻՋԱԶԳՎՅՅԻՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԵՍՀՄ

Անցնում եմ միջադպին գործերին:

Այն վողջ հիմնականը, վոր անհրաժեշտ ե ժամանակակից միջադպին իրագրությունը հասկանալու համար, դուք կդանեք հենց նոր լույս տեսած՝ «Համկ(բ)Կ պատմության» վերջին գլխում: Այնտեղ այդ ասված ե շեշտակի և խիղճ ե հենց ճիշտ նպատակին:

Այնտեղ մատնանշված ե, թե ինչպես վերջին տնտեսական կրիզիսները սրեցին հակասությունները բուրժուազիայի և պրոլետարիատի միջև կապիտալիզմի յերկրներում և թե ինչպես ուժեղացան ագրեսիվ պետությունների փորձերը՝ յերկրի ներսում տնտեսական ճգնաժամից կրած կորուստները հատուցել ի հաշիվ մյուս, թույլ պաշտպանված յերկրները: Այնտեղ մատնանշված ե, թե ինչպես 1935 թվին Փաշխտական Խտայիան հարձակվեց Հարեչտանի վրա և ստորկացրեց նրան: Ընդմիկն նկատի յե առնված վոչ միայն ինքը Հարեչտանը, այլև Անգլիան, հարվածը նրա շահերին, Յեվրոպայից Հնդկաստան, Ասիա տանող անգլիական ծովային ճանապարհներին: Այնտեղ մատնանշվում ե, թե ինչպես Փաշխտական յերկրները՝ Գերմանիան և Իտալիան, 1936 թվին ռազմական ինտերվենցիա սկսեցին Իսպանական հանրապետության դեմ: Իսպանիայում «կարմիրների» դեմ պայքարելու պատրվակով, գերմանական ու իտալական Փաշխտաներն իրենց գործառնները մտցրին Իսպանիա, տեղավորվելով Փրանսիայի թրիկունքում և դրա հետ միասին տիրանալով Անգլիայի ու Ֆրանսիայի ծովային այն ուղիներին,

Վորոնք տանում են դեպի Ա.Ֆրեիկայում ու Ասիայում նրանց ունեցած գաղութային տիրապետութիւնները: Այնտեղ մատնանշվում է նաև այն, թե ինչպես Փաշխտական Գերմանիան 1938 թվին բռնի կերպով հափշտակեց Ալստրիան: Իրանով գերմանական Փաշխտներն իրենց համար ուղի յեն հարթում վոչ միայն Դանուբ գետի շրջանում ու Յեվրոպայի հարավում, այլև առհասարակ յերևան են բերում իրենց ճգտումը՝ հեգեմոնիա ձեռք բերելու Արևմտյան Յեվրոպայում:

Այս բոլորը իմպերիալիստական պատերազմի մի շարք հանգույցներ ստեղծեց Յեվրոպայի յերկրներում: Այդ չի տեսնում միայն նա, ով միջազգային դործերի մեջ վոչինչ չի ուզում տեսնել:

Բացի դրանից, այնտեղ մատնանշվում է, թե ինչպես 1937 թվին յապոնական ռազմամոլները դավթեցին Պեկինն ու Շանհայը, ներխուժեցին Կենտրոնական Չինաստան և իրենց իմպերիալիստական հափշտակողական պլաններն ուղղեցին դեպի ամբողջ Չինաստանի դավթումն ու յենթարկումը: Այդ նշանակում է, վոր Անգլիայի և ԱՄՆ-ի շահերին, վորոնք մեծ առևտուր են կատարում Չինաստանի հետ, Յապոնիան ձգտում է լուրջ հարված հասցնել և արդեն վորոչ արդյունքների յե հասել: Վերջին որերի իրադարձութիւնները միայն սրում են դրութիւնը Չինաստանում: Այդ ևս բազա յե ստեղծում իմպերիալիստական տերութիւնների միջև պատերազմ սկսելու համար:

Այս բոլորից «Համկ(բ)ի պատմութիւն» մեջ արվում է հետևյալ հետևութիւնը՝

«Այս բոլոր փաստերը ցույց են տալիս, վոր յերկրորդ իմպերիալիստական պատերազմն իրոք արդեն սկսվել է: Նա սկսվել է գաղտագողի, առանց պատերազմ հայտարարելու: Պետութիւններն ու ժողովուրդները մի տեսակ աննկատելիորեն սահել են դեպի յերկրորդ իմպերիալիստական պատերազմի որբտը: Աշխարհի գանազան ծայրերում պատերազմ սկսել են յերեք ազբեսիվ պետութիւններ, — Գերմանիայի Իտալիայի, Յապոնիայի Փաշխտական ղեկավար շրջանները: Պատերազմը մղվում է հսկայական տարա-

ծության վրա՝ Ջիբրալտարից մինչև Շանհայ: Պատերազմն արդեն կարողացել է իր որբտի մեջ քաշել կես միլիարդից ավելի բնակչութիւն: Նա մղվում է վերջին հաշվով ընդդեմ Անգլիայի, Տրանսիլիայի, ԱՄՆ-ի կապիտալիստական շահերի, վորովհետև նրա նպատակն է աշխարհի և ազդեցութիւն վորոքոնների վերաբաժանումը հոգուտ ազբեսիվ յերկրների և ի հաշիվ այդ՝ այսպես կոչված դեմոկրատական պետութիւնների:

Յերկրորդ իմպերիալիստական պատերազմի տարբերիչ դիժն առայժմ կայանում է նրանում, վոր այդ պատերազմը վարում է ծախլում են ազբեսիվ տերութիւնները, մինչդեռ մյուս տերութիւնները, «դեմոկրատական» տերութիւնները, վորոնց դեմ էլ իսկապես ուղղված է պատերազմը, ձեռքնում են, թե պատերազմն իրենց չի վերաբերում, ձեռքները լվանում են, հեռ-հեռ են քաշվում, փառաբանում են իրենց խաղաղաթրութիւնը, հայհոյում են Փաշխտական ազբեսորներին և... քիչ-քիչ իրենց դերքերը հանձնում են ազբեսորներին, ընդմին հալատացնելով, վոր իրենք հակահարվածի յեն պատրաստվում»:

«Համկ(բ)ի պատմութիւն» մեջ տրվում է այդպիսի դրութիւն մարքսիստական բացատրութիւնը: Բանն ամենելին «դեմոկրատական» պետութիւնների ռազմական կամ տնտեսական թուլութիւնը չէ: Բանը բոլորովին այլ է: Բանն այն է, վոր «դեմոկրատական» պետութիւնների միասնական ճակատ չկա ընդդեմ Փաշխտական տերութիւնների, բանն այն է, վոր «դեմոկրատական» պետութիւնները հալան չլինելով Փաշխտական պետութիւնների «ծայրահեղութիւններին» և վախենալով վերջիններիս ուժեղացումից, «ե՛լ ավելի վախենում են բանվորական շարժումից» Յեվրոպայում և ազգային-ազատագրական շարժումից՝ Ասիայում, համարելով, վոր Փաշիզմը «լսով հակութիւն» է ընդդեմ այդ բոլոր «վտանգավոր» շարժումների»:

Այս բոլորը պետք է հիշել՝ դատելու համար Մորհրդային Միութիւն արտաքին քաղաքականութիւն մասին և վեր-

Ղին ժամանակվա բոլոր միջազգային իրադարձություններին մասին:

Վերջինը Խորհրդային Պրիմորյեյում, Խասան լճի շրջանում տեղի ունեցած իրադարձությունները: Այժմ հարկ չկա վերհիշելու այդ իրադարձությունների մանրամասնությունները: Դրանք տեղի ունեցան հուլիսի վերջերին ու սգոստոսի սկզբներին և բոլորը հիշում են:

Բանի էությունն այստեղ հետևյալն է: Ինչպես ասում են, որը ցերեկով յապոնական ռազմամուկները փորձ կատարեցին Հեռավոր Արևելքում խլելու խորհրդային տերիտորիայի մի կտորը: Այդպիսի ղեկավարում մոտիվներին համար յապոնական Փաշխտները հեռու չեն գնում: Հակառակ ակնհայտ փաստերին, հակառակ միջազգային պայմանագրերին, նրանք հայտարարեցին, թե Խասան լճի շրջանում գտնվող խորհրդային տերիտորիայի մի մասը Մանջու-գոյի տերիտորիան է, այլ կերպ ասած յապոնական տերիտորիա, իսկ դրանից հետո գործի դրեցին վոչ միայն այդպիսի գործերում «փորձված» իրենց ղեկավարությունը, այլև յապոնական զորքերը: Հարկավ, խորհրդային տերիտորիայի այդ դավթումը նրանց չհաջողվեց և չեր կարող հաջողվել: Նրանք պարզապես չհասկացան, թե ում հետ գործ ունեն: (Ծափահարություններ): Հարկ չեղավ համոզել՝ նրանց համար մասշեյի փաստարկումներով: Յեթե յապոնական Փաշխտներին անհրաժեշտ եր, վորպեսզի համոզվից կերպով խոտեր մեր հրետանին և մեր ավիացիան, ապա նրանք այդ բանին հասան: Ստանալով լավ հակահարված, թեևս նաև լավ դաս, յապոնական զորքերը հետ քաշվեցին իրենց տերիտորիան, և խորհրդային սահմանը լիովին վերականգնվեց: (Ծափահարություններ):

Այժմ միքանի խոսք այդ իրադարձությունների իմաստի մասին:

Մեզ այժմ ստույգ կերպով հայտնի չէ, վոր Զաոդերնայա (Չանկուֆին) սարի գրավման հարցը և, նշանակում է, Խասան լճի շրջանում տեղի ունեցած իրադարձություններին ամբողջ հարցը վճռվել է փաստորեն վոչ թե Տոկիոյում, այլ ինչ-վոր մի այլ տեղ՝ Յեվրոպայում, իսկ ավելի շուտ՝ Բեռլինում: Յապոնական ռազմամուկները հավանաբար ու-

զում էյին պաշտպանել իրենց Փաշխտական բարեկամներին Դերմանիայում և, առանց մտածելու, ընկան իրենց ինչ-վոր մանր գործակալների թակարդը: Յեթե պարոնայք յապոնական ու գերմանական Փաշխտներն ուզում էյին փորձել նախ՝ մեր արտաքին քաղաքականությունը ամբողջունը և յերկրորդ՝ Կարմիր Բանակի մարտական հատկությունները, ապա այդ յերկու հարցի առթիվ էլ նրանք պարզ ու բարբոսնյի պատասխան ստացան: (Բուռն ծափահարություններ):

Նրանք լավ գիտեյին, վոր մենք հայտարարել ենք հետևյալ սկզբունքը՝ «Ուրիշի վոչ մի թիզ հողը չենք ուզում: Բայց մեր հողն էլ, մեր հողից վոչ մի վերջով վոչ վոքի չենք տա»: (Ծափահարություններ): Սակայն յապոնական իմպերիալիստները Զինաստանում սովորություն են դարձրել այլ ժողովուրդի իրավունքի կոպիտ խախտումը: Մյուս կողմից, գերմանական Փաշխտներին այդ արդեն միքանի անգամ հաջողվել է Յեվրոպայի ժողովուրդների վերաբերմամբ: Ըստ յերևութին այդ հիման վրա, «հակահոմոնիստական պակտի» յապոնա-գերմանական մասնակիցները վորոշել էյին այդ իմպերիալիստական-հախառնողական պրակտիկան փոխադրել նաև ԽՍՀՄ վրա: Փորձեցին փոխադրել, բայց... սխալվեցին իրենց հաշիվների մեջ: (Բուռն ծափահարություններ):

Յապոնացիների հարձակումը Խորհրդային Պրիմորյեյում, մեզ առիթ տվեց ցուցադրելու վոչ միայն յապոնական իմպերիալիստներին, այլև ամբողջ աշխարհին, վոր Խորհրդային Միությունը մինչև վերջ հավատարիմ է իր հայտարարություններին, իր արտաքին քաղաքականությունը և վոր նրա հետ կատակ անելը վտանգավոր է: (Բուռն ծափահարություններ):

Յերևում է, վոր յապոնական ու գերմանական Փաշխտներն իրենց վատ հետախույզների միջոցով խիստ խաբվել էյին նաև մեր սահմանապահները ու կարմիր-բանակայինների մարտական հատկությունների վերաբերմամբ: Դրանում նրանք համոզվեցին, ստանալով ուժգին հակահարված: Այժմ ինքնամիթարման համար նրանց վոչինչ չի մնում, քան ամեն տեսակ ստահակների միջոցով, ամեն տեսակ Լինդբերգների միջոցով գանազան հերյուրանքներ տարածել

Կարմիր Բանակի ու խորհրդային ավիացիայի թուլության մասին: Բայց ով ուզում է, թող հավատա լրտես Լինդբերգի նման վարձկան գործակալներին: Մենք գերադասում ենք հավատալ փաստերին: Յեվ նույնիսկ մեր թշնամիներին էլ խորհուրդ չենք տալիս մոռանալ այնպիսի փաստեր, ինչպիսիք են կարմիր-բանակայինների հերոսական գերծերը Պասանի մոտ: Մենք գիտենք, վոր ինչպես յայտնական, այնպես էլ գերմանական Փաշխտոները ցանկություն չունեյին կարմիր Բանակը ժողովրդականացնելու, բայց անկախ իրենց ցանկությունից, նրանք հասան այն բանին, վոր կարմիր-բանակային զորամասերը Պորհրդային Պրիմորյեյում ցուցադրեցին իրենց հիանալի մարտական հատկություններն ու խորհրդային հայրենասիրության ուժը:

ՍՍՀՄ անդրդվելի հավատարմությունն իր խաղաղ արտաքին քաղաքականությանը և նրա պատրաստակամությունը՝ մինչև վերջը պաշտպանելու խորհրդային սահմաններն ամեն տեսակ հարձակումներից, — ահա Պասանի մոտ տեղի ունեցած իրադարձությունների արդյունքը, վորը միջազգային մեծ նշանակություն ունի:

Անցնենք Յեվրոպայում տեղի ունեցող վերջին իրադարձություններին:

Չեխոսլովակիայի հետ կապված վերջին իրադարձությունների դասերը շատ բանով ուսանելի յեն: Անդլիսիական և Ֆրանսական կառավարությունների ղեկավարներն Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի մյուսնեանյան համաձայնությունը հաճույքով նկարագրում են վորպես խաղաղության գործի մեծ հաղթանակ, իսկ իրենց՝ վորպես մեծ խաղաղարարներ: Ճիշտ է, բնավ վոչ բոլորն են հավատում դրան ու, թերևս, լուրջ հիմքեր ունեն դրա համար:

Իրոք, ինչպե՞ս էյին զարդանում իրադարձությունները Չեխոսլովակիայի շուրջը: Այդ իրադարձությունների մեջ ո՞վ յեղավ իսկապես հաղթողը և ո՞վ՝ պարտվածը: Լավ գիտեցեք իսկական փաստերը և պարզ կլինի, վոր այստեղ պետք է խոսել, համենայն դեպս, յերկու «հաղթանակների» մասին:

Չեխոսլովակիայի հարցում առաջին վճռական իրադար-

ձությունը պետք է ընդունել այն «հաղթանակը», վոր Անգլիայի և Գերմանիայի կառավարությունները համատեղ ջանքերով ձեռք բերվեց վոչ մեկ ուրիշի, յեթե վոչ... Ֆրանսիայի կառավարության նկատմամբ: Յերկու կառավարություններ—Անգլիայի կառավարությունը և Գերմանիայի կառավարությունը—«հաղթեցին» Ֆրանսիայի կառավարությանը, հասնելով այն բանին, վոր Ֆրանսիան հրաժարվեց Չեխոսլովակիային ոգնելու պայմանագրից: Այս էր առաջին «հաղթանակն» այդ իրադարձությունների ընթացքում:

Այդ արդեն կանխորոշում էր նաև վերջին ետապը՝ Չեխոսլովակիայի հարցի լուծման մեջ: Մնում էր վոչ դժվար մի գործ, մնում էր, վոր 4 պետությունները՝ Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունները համաձայնության դային և «հաղթեյին» Չեխոսլովակիայի կառավարությանը: Յեվրոպայի 4 առավել ուժեղ իմպերիալիստական պետություններ, առանց մի դժվարության, իսկապես «հաղթեցին» նաև փոքրիկ Չեխոսլովակիային: Յեվրոպայի Փաշխտական և այսպես կոչված, «դեմոկրատական» տերությունների համաձայնությունը Մյունխենում կայացավ և Չեխոսլովակիայի նկատմամբ լիակատար «հաղթանակ» ձեռք բերվեց:

Մնացած ամեն ինչ հարթ յեղանակով ընթացավ: Գերմանական իմպերիալիզմը Չեխոսլովակիայից սրկեց ավելի, քան ինքը կարող էր յենթադրել: Ոգտվեց Լեհաստանը, վորպես գերմանական Փաշիզմի դաշնակիցը Չեխոսլովակիայի մասնատման գործում: Ազահությամբ մի բավական մեծ պատահարեց Հունգարիան: Այդ չի նշանակում, վոր Յեվրոպայի մեծ ու փոքր գիշատիչների ախորժակը բավարարված է: Ընդհակառակը, այդ ախորժակը միայն էլ ավելի բորբոքեց նրանց և ուժեղ պայքար առաջացրեց վոչ միայն Չեխոսլովակիայի, այլև յեվրոպական միջանի այլ յերկրների նոր բաժանման շուրջը:

Պորհրդային Միությունը չի մասնակցել և չէր կարող մասնակցել Փաշխտական իմպերիալիստների և, այսպես կոչված, «դեմոկրատական» կառավարությունների համաձայնությանը՝ ի հաշիվ Չեխոսլովակիայի: Սորհրդ-

7836-9



դային Միությունը չի մասնակցել ու չէր կարող մասնակցել նաև Ձեխոսլովակիայի մասնատմանը՝ գերմանական Փաշիզմի ու նրա դաշնակիցների ախորժակը բավարարելու համար: Բայց վոչ վոքի մեջ կասկած մնալ չէր կարող, թե ինչպիսի քաղաքականություն է բռնել Խորհրդային Միությունն այդ հարցում: Յեթե Փրանսական կառավարությունը հրաժարվեց Ձեխոսլովակիայի հետ ունեցած իր պայմանագրից նրա փորձության վճռական մոմենտին և ոչնեց Անգլիայի համաձայնությանը գերմանական Փաշիզմի հետ՝ ի հաշիվ վոչ այլ մեկի, յեթե վոչ քիչ թե շատ դեմոկրատական Ձեխոսլովակիայի, ապա Խորհրդային Միությունը ցույց տվեց, վոք ինքը բոլորովին այլ վերաբերմունք ունի գեպի միջազգային պայմանագրերը: Խորհրդային Միությունը ցույց տվեց և ամբողջ աշխարհի առաջ ցուցադրեց, վոք նրա հավատարմությունն ազրեսիայի դեմ պայքարելու մասին կնքված պայմանագրերի նկատմամբ, անդրգվելի յե: (Ծափահարություններ):

Չնայած ամեն բանի, այդ թվում՝ նաև չեխոսլովակյան հարցում խորհրդային դիրքը վորպես խուսափողական և անորոշ պատկերելու ամենախարդախ փորձերին, այդ չհաջողվեց նույնիսկ չափազանց ճարպիկ մարդկանց: Իսկ Փրանսական ու անգլիական կառավարությունները դոհարեցին վոչ միայն Ձեխոսլովակիան, այլև իրենց շահերը՝ հանուն ազրեսոթի հետ համաձայնության դալու:

Իրանով Ֆրանսիայի ու Անգլիայի կառավարությունները գերմանական ու իտալական Փաշիզմի աչքում բարձրացրին արդյոք հարգանքը գեպի իրենց իրավունքները: Առայժմ չի յերևում: Ավելի շուտ ընդհակառակը՝ նրանց միջազգային հեղինակությունն զգալիորեն խախտվեց: Ինչպես հայտնի յե, վերջին ժամանակներս վիեննայում չեխոսլովակյան տերիտորիայի բաժանումը կատարվեց արդեն առանց նրանց մասնակցության, այլ գերմանական ու իտալական Փաշիզմի հասարակ համաձայնության միջոցով: Բայց մի բան պարզ է՝ Խորհրդային Միությունը թույլ չտվեց իրեն վախեցնել Փաշիստական յերկրների սպառնալիքներով, մի բան, վոք չի կարելի ասել միջանի այսպես կոչված «գեմոկրատական» յերկրների մասին: Խորհրդային

Միությունը, ընդհակառակը, բոլոր յերկրների առջև ցուցադրեց իր հավատարմությունը կնքված պայմանագրերին ու միջազգային պարտավորություններին և ազրեսիայի դեմ պայքարելու իր պատրաստակամությունը: (Բուռն ծափահարություններ):

Այս փաստը հակայական միջազգային նշանակություն ունի վոչ միայն տվյալ մոմենտի համար, այլև Փաշիզմի ու Փաշիստական ազրեսիայի դեմ ուղղված միջազգային ամբողջ հետագա պայքարի համար:

Միայն Խորհրդային Միությունը, սոցիալիզմի յերկերն է, վոք անհողող կանգնած է յեղել և կանգնած է Փաշիստական ազրեսիայի դեմ պայքարելու դիրքի վրա, խաղաղությունը, ժողովուրդներին ազատությունն ու անկախությունը Փաշիստական հարձակումից պաշտպանելու դիրքի վրա: (Բուռն ծափահարություններ):

Ինչպես Խասանի մոտ տեղի ունեցած իրադարձությունները, այնպես և Ձեխոսլովակիայի բախտի շուրջ տեղի ունեցող իրադարձություններն ուղղակի առնչություն ունեն յերկրորդ խմպերիալիստական պատերազմի հարցի հետ, պատերազմ, վոքը հրահրելու վրա «աշխատում են» պատերազմի հրձիգները՝ Գերմանիայի, Յապոնիայի, Իտալիայի Փաշիստները:

Կարող է արդյոք կասկած լինել, վոք Յապոնիայի հարձակումը Պրիմորյեյում մի փորձ էր Հեռավոր Արևելքում պատերազմ սկսելու համար: Յեթե Խորհրդային Միությունը գործնականում ցույց չտար իր արտաքին քաղաքականության ամբուլթյունն ու իր դժի անսասանությունը՝ իր սահմանները կարմիր Բանակի գենքով պաշտպանելու գործում, ապա այդ չէր կարող առիթ չձառայել նոր ուղմական ավանտյուրաներ հրահրելու համար, նոր ուղմական հարձակումներ սկսելու համար, յերկրորդ խմպերիալիստական պատերազմի մասշտաբը լայնացնելու համար: Այդ իրադարձությունների մեջ մեր բռնած հաստատուն դիրքը ստիպեց խելքի դալ սանձը կարած ավանտյուրիստներին ինչպես Տոկիոյում, այնպես և Բեռլինում, — նրանց ստիպեց հետ տալ ընթացքը: Անլիճելի յե, վոք դրանով Խորհրդային Միությունը մեծազույն ծառայություն մատուցեց ին-

ղաղության գործին: (Բուռն, յերկարառև ծափահարություններ):

Սորհրդային պետութիւնը ցույց տվեց, վոր նրա սահմաններն անառիկ են, վոր նա գիտե պաշտպանել իր ժողովրդի շահերը, վոր այդ շահերի համար մղվող պայքարը միևնույն ժամանակ մի պայքար է բոլոր ժողովուրդներին շահերի համար, ընդհանուր խաղաղության շահէ ի համար:

Չեխոսլովակիայի հետ կապված իրադարձութիւնները ռազմական տենդի իրադրութիւն ստեղծեցին ամբողջ Յեվրոպայում: Բավական է ասել, վոր այդ իրադարձութիւնների մոմենտին յեվրոպական միայն չորս յերկրներում՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Լեհաստանում և Չեխոսլովակիայում, բանակների թվական կազմն ամենահամեստ հաշիվներով շատ կարճ ժամանակամիջոցում ավելացավ ավելի քան յերկու անգամ, ավելի քան 2 միլիոն մարդով: Չնայած Մյունխենում տեղի ունեցած, իբր թէ, խաղաղասիրական համաձայնութեանը, մյունխենյան համաձայնութեան բոլոր մասնակիցներն այժմ զբաղված են սպառազինութեան հետապա ավելացումով, իրենց բանակների մեծացումով, ռազմական բյուջեների կատաղի ավելացումով: Փաշտոտական կառավարութիւնների համաձայնութիւնը «դեմոկրատական» յերկրների կառավարութիւնների հետ, ամենէին չթուլացրեց յերկրորդ իմպերիալիստական պատերազմի բորբոքման վտանգը, այլ ընդհակառակը՝ յուղ ալելացրեց կրակի վրա: Յեվրոպայի ազրեսիվ յերկրները վոչ միայն ծավալեցին Յեվրոպայի պետութիւնների քարտեզի վերագծման հետագա պլանները, այլև գաղութները վերաբաժանելու իրենց պահանջները: Այսպիսի մոմենտում հարկ չկա սպասելու յերկրորդ իմպերիալիստական պատերազմի դադարեցմանը կամ մարմանը: Ընդհակառակը, նոր ոճախների առաջացման և նրա մասշտաբների հետագա լայնացման վտանգն ակներև է:

Ինչ անենք. մենք գիտենք մեր պարտականութիւնները: Մենք կպատասխանենք պատերազմի հրճիչների, ազրեսորների կողմից Սորհրդային Միութեան դեմ ուղղված ամեն տեսակ պրովոկացիոն յելույթներին—լինի այդ արեւմուտ-

քում, թէ արևելքում—մենք յուրաքանչյուր հարվածին կրկնակի ու յեռակի հարվածով կպատասխանենք պատերազմի հրճիչներին ու պրովոկատորներին: (Բուռն, յերկարառև ծափահարություններ):

Միայն ուժեղ Սորհրդային պետութիւնը, ուժեղ իր ճիշտ արտաքին քաղաքականութեամբ և ամեն տեսակ արտաքին փորձութիւնների հանդեպ իր պատրաստութեամբ, միայն այդպիսի պետութիւնն է ընդունակ հետևողականորեն ու անշղթոյն վարելու խաղաղութեան քաղաքականութիւն, իր սահմանների ու սոցիալիզմի շահերի անհողող պաշտպանութեան քաղաքականութիւն:

Ով կուզի համոզվել, թէ վորքան ամուր և հզոր է այդ ուժը, թող փորձի: (Յերկար ժամանակ չլռոյ ծափահարություններ):

Մենք պետք է բոլոր հետևութիւններն անենք այդպիսի գրութիւնից:

III. ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեկ բան անվիճելի յե վերջին ժամանակաշրջանի համար՝ մեր աչքում բարձրացել է պետութեան՝ վորպես կոմունիզմի համար մղվող պայքարի զենքի դերը: Մենք սկսել ենք ավելի լավ հասկանալ այդ դերը, սոցիալիստական պետութեան դերը կապիտալիստական շրջապատման մեջ:

Մարքսիզմ—լենինիզմի հիմնական աշխատութիւնների մեջ, վորոնք յերևան են յեկել, ինչպես հայտնի յե, դեռ Հոկտեմբերյան Հեղափոխութիւնից առաջ, մշակված են սոցիալիստական պետութեան հիմնական սկզբունքները՝ բուրժուական դեմոկրատիզմից պրոլետարական դեմոկրատիզմի ունեցած արմատական տարբերութեամբ, և մատնանշված են սոցիալիստական պետութեան զարգացման, ապա նաև կոմունիզմի բարձրագույն Ֆալին անցնելիս նրա մահանալու հիմնական ուղիները: Այդ այժմ էլ հանդիսանում է մարքսիզմ—լենինիզմի՝ պետութեանը վերաբերյալ ուսմունքի հիմքերի հիմքը:

Բայց մենք ունենք սոցիալիստական պետութեան 21-ամյա գոյութեան փորձը, սկսած դեպի սոցիալիզմ նրա ա-

բաժն առաջին քայլերից, մինչև սոցիալիզմի լիակատար հաղթանակը Սորճրդային Միության ներսում: Մենք ունենք նոր, սոցիալիստական տիպի պետութիւն կառուցելու ամենահարուստ փորձ, մի շարք տարիների ընթացքում հարձակվող կապիտալիստական յերկրների դեմ նրա մղած գինւած պայքարի փորձը, ամբողջ ժողովրդական անտեսութեան սոցիալիստական վերակառուցման և բոլոր շահագործող դասակարգերի լիկվիդացիայի փորձը, վերջապես, այսպես կոչված խաղաղ դոյութեան պայմաններում թշնամական կապիտալիստական շրջապատման հետ նրա հարաբերութիւնների դարձացման փորձը:

Այսօր, յերբ մեր յերկրում սոցիալիզմը հիմնականում արդեն կառուցված է, հատուկ նշանակութիւն է ստանում կապիտալիստական յերկրների հետ մեր պետութեան ունեցած փոխհարաբերութիւնների հարցը, կապիտալիստական շրջապատման հետ մեր ունեցած փոխհարաբերութիւնների հարցը: Պետք է հարկ յեղած հետևութիւններն անել մեկ, առանձին վերցրած, յերկրում սոցիալիզմ կառուցելու թեօրիայից և վերջին տարիների մեր քաղաքական փորձից:

Յե՛վ այստեղ գլխավոր հետևութիւնը մենք արել ենք արդեն վաղուց՝ դեռևս Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարութեամբ: Հետևութիւնն արվեց ամենից առաջ Կարմիր Բանակի ստեղծմամբ և այն ամենով, ինչ վոր արել է Կարմիր Բանակն անցած ամբողջ ժամանակաշրջանում խորհրդային պետութիւնը պաշտպանելու համար:

Սակայն, ընկեր Ստալինն իրավացի յեր, յերբ անցյալ տարի Կենտկոմի փետրվար-մարտյան պլենումում ամբողջ հասակով զրեց կապիտալիստական այն շրջապատման հարցը, վորի մեջ ապրում և դարձանում է մեր, սոցիալիստական պետութիւնը, և դեպի Սորճրդային Միութիւնն այդ շրջապատման ցույց տված թշնամական վերաբերմունքի թերազնահատման վտանգավորութեան հարցը:

Ընկեր Ստալինն այն ժամանակ ասել էր.

«Կապիտալիստական շրջապատումը—այդ դատարկ Ֆրազ չէ, դա շատ ուշալ և անախօթ մի յերեւոյթ է: Կապիտալիստական շրջապատումը—այդ

նշանակում է, վոր կա մի յերկիր՝ Սորճրդային Միութիւնը, վորն իր մօտ սոցիալիստական կարգեր է հաստատել, և, բացի դրանից, կան շատ յերկրներ— բուրժուական յերկրներ, վորոնք շարունակում են կապիտալիստական կյանք վարել և վորոնք շրջապատել են Սորճրդային Միութիւնը, առիթի սպասելով, վոր հարձակվեն նրա վրա, ջախջախեն նրան կամ, համենայն դեպս, խարխլեն նրա հզօրութիւնը և թուլացնեն նրան:

Այդ հիմնական փաստի մասին մոռացել են մեր ընկերները: Բայց չէ՞ վոր հենց այդ է, վոր վորոշում է կապիտալիստական շրջապատման և Սորճրդային Միութեան փոխհարաբերութիւնների հիմքը»:

Ընկեր Ստալինն այնուհետև հիշեցրեց, վոր հարաբերութիւնները նույնիսկ յերկու միատիպ բուրժուական պետութիւնների միջև կառուցված են միմյանց դեմ ուղղված կատաղի պայքարի հիման վրա, իրենց լրտեսներին, վնասարարներին, ղիլերսանտներին, մարդասպաններին միմյանց թիկունք ուղարկելու հիման վրա: Դրանից հետո ընկեր Ստալինն ասաց.

«Հարց է ծագում, թե ինչո՞ւ բուրժուական պետութիւնները խորճրդային սոցիալիստական պետութեանը պետք է ավելի մեղմ ու ավելի բարե-դրացիաբար վերաբերվեն, քան նույնատիպ բուրժուական պետութիւններին: Ինչո՞ւ պետք է նրանք Սորճրդային Միութեան թիկունքներն ավելի պակաս թիկով լրտեսներ, վնասարարներ, ղիվերսանտներ ու մարդասպաններ ուղարկեն, քան ուղարկում են իրենց ազգակից բուրժուական պետութիւնների թիկունքները: Այդ վորտեղի՞ց էք վերցրել դուք: Մարքսիզմի տեսակետից ավելի ճիշտ չէ՞ լինի արդյօք յենթադրել, վոր բուրժուական պետութիւնները Սորճրդային Միութեան թիկունքները պետք է ուղարկեն կրկնակի ու յեռակի ավելի վնասարարներ, լրտեսներ, ղիվերսանտներ ու մարդասպաններ, քան վորեւէ բուրժուական պետութեան թիկունքները:

Պարզ չե՞ արդյոք, վոր քանի դոյուժյուն ունի կապիտալիստական շրջապատումը, մեզ մոտ դոյուժյուն են ունենալու վնասարարներ, լրտեսներ, դիվերսանտներ ու մարդասպաններ, վորոնց մեր թիկունքներն են ուղարկում ստարերկրյա պետութիւնների դործակալները»:

Պետք է ընդունել, վոր ընկեր Ստալինի այդ հիշեցումը չարիազանց ճիշտ եր և ծայր աստիճանի անհրաժեշտ: Մեր խնդիրների հարցի այդպիսի դրվածքի լույսով ընկեր Ստալինը բացահայտեց տրոյկիստների և բուխարինականների դերը, վորպէս ստարերկրյա հետախուզութիւնների դործակալների, վորպէս այդ հետախուզութիւնների առաջադրանքներով դործող վնասարարների, լրտեսների ու մարդասպանների: Հետագա իրադարձութիւններն ե՛լ ավելի մեծ ուժով հաստատեցին այդ ցուցումների ճշտութիւնը:

Այժմ հայանի յե, վոր մեր անհողութիւն հետեանքով ստարերկրյա հետախուզութիւններն ու ամեն տեսակ Փաշիստական դործակալներ մի շարք տարիների ընթացքում քողարկում եյին իրենց հանցագործութիւնները մեր հայրենիքի դեմ, շատ դեպքերում ոգտադործելով նաև մեր կուսակցական սոմսավոր մարդկանց: Մեր ընկերների անհողութիւնը թշնամական կապիտալիստական շրջապատման վերաբերմամբ շատ բանով ոգտակար եր մեր դասակարգային թշնամիներին, բայց վնաս եր հասցնում իրորհրդային Միութիւնն աշխատավորների արմատական շահերին: Խորհրդային Միութիւնն դեմ բուրժուազիայի մղած պայքարի այդ յեղանակներն ինչպէս հարկն է հասկանալով միայն, մենք կարող եյինք հակամիջոցներ ծավալել մեր յերկրի շահերի պաշտպանութիւնն ուղղութիւնով: Միայն այդ ժամանակ մեզ համար ինչպէս հարկն է պարզ դարձաւ մեր խորհրդային հետախուզութիւնն թուլութիւնն ու այդ չարիազանց կարեւոր խնդիրը ևս բոլշեիկորեն լուծելու անհետաձգելի անհրաժեշտութիւնը: Մենք այդ խնդիրն այժմ կատարում ենք և չեմ կասկածում, վոր վատ չենք կատարի: (Բուռն ծափահարութիւններ):

Կապիտալիստական շրջապատման պայմաններում հա-

նուն կոմունիզմի լիակատար հաղթանակի հաղթահանորեն պայքարելու համար, մենք պետք է բոլշեիկորեն բարձրացնենք առայժմ միակ սոցիալիստական պետութիւնն կազմակերպվածութիւնն ու հզորութիւնը: Ժամանակի ընթացքում, յերբ սոցիալիզմը կհաղթանակի բոլոր առաջավոր կապիտալիստական յերկրներում, պետութիւնը՝ իր բանակով ու այլ հատուկ ապարատով՝ կմեռնի, ավելորդ կդառնա: Բայց կապիտալիստական շրջապատման պայմաններում խոսքը վերաբերում է վոչ թե սոցիալիստական պետութիւնն մահացմանը, այլ դասակարգային թշնամու և մանապանդ իՍՂՄ սահմաններից դուրս դեռևս չլախնախաձ դասակարգային թշնամու հարվածները հաղթահանորեն հեռ մղելու նրա ընդունակութիւնը: Ներկա պայմաններում հարցը վոչ թե խորհրդային պետութիւնն մահացումն է, այլ այն, վոր ուժեղացնենք մեր պետութիւնն հզորութիւնը, վոր ունենանք ամուր և հզոր, բոլշեիկորեն կազմակերպված սոցիալիստական պետութիւն: (Բուռն ծափահարութիւններ):

Կենտկոմի փետրվար-մարտյան Պլենումում արտասանած նույն այդ ճառի մեջ ընկեր Ստալինն ասել եր.

«Պետք է նկատի ունենալ, վոր ջախնախաձ դասակարգերի մնացորդները իՍՂՄ մեջ միայնակ չեն: Նրանք ուղղակի ոժանդակութիւն են վայելում իՍՂՄ սահմաններից դուրս գտնվող մեր թշնամիներից: Սխալ կլիներ կարծել, թե դասակարգային պայքարի վորտուր սահմանափակված է իՍՂՄ սահմաններով: Յեթե դասակարգային պայքարի մի ծայրը դործում է իՍՂՄ շրջանակներում, ապա նրա մյուս ծայրը ձգվում, հասնում է մեզ շրջապատող բուրժուական պետութիւնների սահմանները»:

Իսկապէս, դասակարգային թշնամու ներքին ուժերը մեր յերկրում կտրված և ջախնախաձ են, բայց չի կարելի մոռանալ, վոր մեր յերկրում դեռևս տեղի ունեցող դասակարգային պայքարի մյուս ծայրը ձգվում, հասնում է մեզ շրջապատող բուրժուական պետութիւնների սահմանները: Ուստի, մեր պայքարն ամեն տեսակ վնասարարների դեմ պարզապէս՝ ներքին դործ չէ, — այդ՝ պայքար է դա-

սակարգային թշնամու դեմ, վորը դեռևս ջախջախված չեմեր կողմից, քանի վոր նա գտնվում է Նորհրդային Միության սահմաններից դուրս, դա պայքար է մյուս պետությունների բուրժուազիայի դեմ, քանի վոր այդ խնդիրը հաղթականորեն երազործելի չեմիայն մի շարք յերկրների պրոլետարիատի ուժերի միացմամբ:

Ստարերկրյա հետախուզությունների գործակալները կապիտալիստական պետություններին հարկավոր են հատկապես նրա համար, վորպեսզի վորոչ դիրքեր նախապարտստեն մինչև Նորհրդային Միության վրա զինված հարձակում գործելու մոմենտը: Ուստի, այդ թշնամական ուժերին արմատախիլ անելու և ջախջախելու խնդիրը կվերացվի միայն այն ժամանակ, յերբ այդ կատարված կլինի մինչև վերջը: Չհասկանալ այդ, նշանակում է չհասկանալ առաջին սոցիալիստական պետության հիմնական խնդիրներից մեկը, չհասկանալ մեզ թշնամի կապիտալիստական շրջապատման վտանգավոր դերը:

Մենք պետք է հիշենք ընկեր Ստալինի խոսքերը, կոմյերիտական Իվանովին տված նրա հայտնի պատասխանի մեջ: Ընկեր Ստալինն ասել է.

«Հարկավոր է ուժեղացնել ու ամրապնդել ՆՍՀՄ բանվոր դասակարգի ինքերնացիոնալ պրոլետարական կապերը բուրժուական յերկրների բանվոր դասակարգի հետ. հարկավոր է կազմակերպել բուրժուական յերկրների բանվոր դասակարգի քաղաքական ոգնությունը մեր յերկրի բանվոր դասակարգին՝ մեր յերկրի վրա ռազմական հարձակում լինելու դեպքում, ինչպես նաև կազմակերպել մեր յերկրի բանվոր դասակարգի ամեն տեսակ ոգնությունը բուրժուական յերկրների բանվոր դասակարգին. հարկավոր է ամեն կերպ ուժեղացնել ու ամրապնդել մեր Կարմիր բանակը, Կարմիր նավատորմը, Կարմիր ավիացիան, Պաշտ-Ավիաբիւրո: Հարկավոր է մեր ամբողջ ժողովուրդը պահել մորիլիցացիոն պատրաստության վիճակում՝ ռազմական հարձակման վտանգի հանդեպ, վորպեսզի վորչ մի «պատահականություն» և մեր ար-

տաքին թշնամիների վորչ մի Ֆոկուսը չկարողանան մեզ հանկարծակիի բերել...»:

Պետք է հիշել, վոր քանի գոյություն ունի կապիտալիստական շրջապատումը, կապիտալիզմի պայքարն աշխարհիս առաջին խորհրդային պետության դեմ վոր թե կթուլանա, վոր թե կմարի, այլ ընդհանրապես՝ կաճի, կսրվի, կհենվի ավելի ու ավելի սուր, ավելի ու ավելի ծայրահեղ միջոցների վրա: Ուստի, մենք եմք ավելի համառորեն պետք է աշխատենք մեր պետության պաշտպանական հզորությունն ամրապնդելու վրա, դասակարգային թշնամու դեմ, թշնամական կապիտալիստական շրջապատման դեմ պայքարելու մեր հմտությունը և՛ այսպես ասած՝ արվեստը զարգացնելու վրա, մեր պետական ասլարատի բոլոր ու ամեն տեսակ թերությունները վերացնելու վրա, վորոնք խանգարում են այդ խնդրի կատարմանը:

Հասկանալ և կենսազործել ընկեր Ստալինի ցուցումները կապիտալիստական շրջապատմանը մեր ցուցաբերելիք վերաբերմունքի մասին, — նշանակում է ամրացնել մեր մարտական դիրքերը մեր դասակարգային թշնամիների դեմ՝ ինչպիսի կերպարանք ել ունենան նրանք, նշանակում է գործը տանել դեպի սոցիալիզմի լիակատար հաղթանակը:

Հենց այդ է մեր Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ Հեղափոխության արմատական խնդիրը: (Ծափահարություններ):

Կոմունիզմի հաղթանակի համար մղվող պայքարի ամբողջ փորձը մեզ լուսարանում է մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը: Մեր բոլշևիկյան կուսակցությունն ընթացել և ընթանում է այդ պայքարի ավանգարդում:

Վերջերս լույս տեսած՝ «Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության պատմություն» դիրքն առաջին անգամ տալիս է մարքսիզմ-լենինիզմի հիմունքների գիտական շարադրումը՝ բոլշևիկյան կուսակցության ամբողջ պանծալի պատմության ուրիշակով: «Համ. Կ(բ) կուսության» այդ դասընթացի լույսընծայումը հնարավոր դարձավ միայն շնորհիվ այն բացառիկ աշխատանքի, վոր կատարել է այդ գրքի վրա ինքը՝ ընկեր Ստալինը: (Ծափահարություններ):

«Համկ(բ)Կ պատմութեան» լույսընծայումը կունենա
հսկայական հեղափոխական-լուսավորական նշանակութիւն :
Գիրքը համապատասխանում է կուսակցութեան և աշխատա-
վորների ամբողջ մասսայի խորապես հասունացած դադա-
փարական պահանջներին : Նա լուսարանում է մարքսիզմ-
լենինիզմի այն հիմունքները, վերոնցով դարգացել է մեր
կուսակցութեանը, և դրա հետ միասին լուսարանում է
նրա պայքարի փորձը, պայքար, վորն այնքան մեծ դեր խա-
ղաց հենց մարքս-լենինյան ուսմունքի դարգացման դոր-
ծում :

Այդ գրքի հեղափոխական-լուսավորական նշանակու-
թյունն այն է, վոր նա հնարավորութեան է տալիս հասկա-
նալու, թե ի՞նչպէս է ստեղծվել մեր կուսակցութեանը,
հաղթական սոցիալիստական հեղափոխութեան կուսակցու-
թյունը, դադափարական ի՞նչպիսի դրոշի տակ է աճել նա և
դադափարական ի՞նչպիսի թշնամիները դեմ է ստիպված յե-
ղել պայքարել, ի՞նչպէս էր բոլշևիկյան կուսակցութեանը
նախապարաստում հաղթանակը և իսկապես հաղթեց Հոկ-
տեմբերյան հեղափոխութեան մեջ և թե ի՞նչպէս այդ հաղ-
թանակի հիման վրա նա ստեղծեց սոցիալիստական հասա-
րակակարգ, վորը նոր դարագլուխ բաց արեց մարքսիզմի
դարգացման մեջ :

«Համկ(բ)Կ պատմութեան» վոչ թե հենց այնպես շա-
րագրում է փաստերը, այլ գիտականորեն բացատրում է
դրանք և դրա հետ միասին ամբողջ աշխարհի բանավորներին
ու աշխատավորներին մորթիլիզացիայի յե յենթարկում պայ-
քարելու հանուն կոմունիզմի լիակատար հաղթանակի :

«Համկ(բ)Կ պատմութեան» բացառիկ մեծ կազմակեր-
պող դեր կխաղա սոցիալիստական հասարակարգի կա-
ռուցման ուղղութեամբ մեր մղած ամբողջ պայքարում : Յու-
րաքանչյուր բանվոր, կոլտնտեսական, ինտելիգենտ այդ
գրքի մեջ պատասխաններ կգտնի շատ հարցերի վերաբե-
րյալ, վորոնք մտտիկից, անմիջականորեն վերաբերում են
նրա աշխատանքին, սոցիալիստական շինարարութեանը նրա
ցուցարերած մասնակցութեանը :

Այդ գիրքը հատուկ կազմակերպող դեր կխաղա խոր-

հըրդային ինտելիգենցիայի կազրերի վերաբերմամբ, ինտե-
լիգենցիա, վորի նվիրվածութեանից և մեր սոցիալիստական
շինարարութեանը գիտակցարար մասնակցելուց են կախված
մեր գործի այնքան շատ հաջողութեանները :

Մենք պետք է հիշենք, վոր խորհրդային ինտելիգեն-
ցիան, այդ՝ մեր 9, իսկ դուցե և 10 միլիոն կուլտուրային
պատրաստված աշխատողներն են, սկսած պետական ձեռ-
նարկութեանների ու հիմնարկների, կոլտնտեսութեանների
ու շատ կոլտնտեսային կազմակերպութեանների ղեկավար-
ներից, ուսուցիչներից, գիտութեան ու արվեստի աշխատող-
ներից, բժիշկներից ու բժշկականութեան այլ աշխատողներից,
ինժեներներից, ագրոնոմներից, տեխնիկներից, սուևարական
աշխատողներից, հաշվապահներից, հաշվային աշխատողնե-
րից և խորհրդային ինտելիգենցիայի դարձյալ մի ամբողջ
շարք այլ կարևոր կատեգորիաներից, էլ չեմ խոսում բու-
հականների հսկայական քանակի մասին, սուանց վորոնց չի
կարելի կազմակերպել պետական և կոլտնտեսային տնտե-
սութեանը, չի կարելի սպասարկել բնակչութեան կարիքնե-
րը ու պահանջները :

Մեզանում հաճախ գոյութեան է ունեցել հանցավոր-
թեթևամիտ վերաբերմունք դեպի խորհրդային ինտելիգեն-
ցիայի և խորհրդային յերիտասարգութեան դաստիարակու-
թեան գործը : Ժամանակն է հասկանալու, վոր յուրաքան-
չյուր յուրջ հաջողութեան խորհրդային ինտելիգենցիայի և
խորհրդային յերիտասարգութեան այդ կազրերի բոլշևիկյան
դաստիարակութեան գործում՝ չափազանց բարձրացում է
մեր աշխատանքը, կապահովի իրենց՝ բանվորների ու կոլ-
տնտեսականների աշխատանքի կարևոր հաջողութեանները,
վոր սուանց մարքսիզմ-լենինիզմի դադափարներով վոզե-
չընչված, լենինի-Ստալինի գործին նվիրված մեր ինտելի-
գենցիայի չի կարելի կոմունիզմ կառուցել : (Բուռն ծափա-
հարուքյուններ) :

Մեզանից յուրաքանչյուրի համար «Համկ(բ)Կ պատմու-
թեան» անփոխարինելի գենք կհանդիսանա կոմունիզմի
հաղթանակի համար մղվող պայքարում : «Համկ(բ)Կ պատ-
մութեանով» մենք դարձանք ալեյի՝ գիտակից, ալեյի՝ կազ-

մակերպված և, դրանով իսկ դարձանք շատ անպատ ավելի ուժեղ:

Այդ դրքի մեջ տրված է մեր ամբողջ կուսակցութեան պատմութիւնը, ներառյալ հաղթական Հոկտեմբերյան Հեղափոխութեան փորձը: Նա վո՛չ միայն տալիս է մեր կուսակցութեան ու հեղափոխութեան պատմութիւնը: Այդ գլըքի յերեւան գալը նշանակում է, վոր այսուհետեւ ե՛լ ավելի յե բարձրացված Լենինի—Ստալինի կուսակցութեան դրոշը, վորպես սոցիալիզմի լիակատար հաղթանակի դրոշ: (Բուռն ծափահարութիւններ):

Ընկերներ: Հոկտեմբերյան Հեղափոխութեան 21-րդ տարեդարձն անցյալ տարի մեր տոնած պանծալի քսանամյակի շարունակութիւնն է:

Այն ուղին, վորով մենք ընթացել և ընթանում ենք, խորհրդային ժողովրդի պանծալի հաղթանակներէ ուղին է, սոցիալիզմի հաղթանակի ուղին:

Մեր արդյունաբերութիւնը և մեր ամբողջ ժողովրդական տնտեսութիւնն աճում է, ինչպես վոչ մի տեղ:

Մեր կոլտնտեսային տնտեսութիւնը մեծ վերելք է ապրում և աճում է այնպես, ինչպես վոչ մի պետութեան մեջ չի աճում գյուղատնտեսութիւնը:

Մեր Կարմիր Բանակն ամրապնդվել է և մարտականորեն լիակատար պատրաստ վիճակում կանգնած է մեր հայրենիքի շահերի, սոցիալիզմի շահերի պաշտպանութեան իր դերքում:

Խորհրդային Միութեան բոլոր ժողովուրդները համախըմբված են վորպես մի մեծ ուժ և գիտեն, վոր վոչ մի թշնամի սարսափելի չէ իրենց համար:

Մենք գիտենք, վոր մեր յերկիրը, պետութիւնը և կուսակցութիւնը պատրաստ են ամեն տեսակ անակնկալների և պատրաստ են պատերազմի ամեն մի հարվածին պատասխանելու կրկնակի ու յեռակի ահեղ հարվածով: (Բուռն, յերկարատև ծափահարութիւններ):

Կեցցե՛ն Խորհրդային Միութեան ժողովուրդները և նրանց յերջանիկ կյանքը: (Բուռն ծափահարութիւններ):

Կեցցե՛ր Խորհրդային Միութեան բարոյական-քաղաքա-

կան անխորտակելի միասնութիւնը: (Յերկարատև ծափահարութիւններ):

Կեցցե՛ր մեր հարազատ, իր անցյալ և իր ապագա հաղթանակներով պանծալի Կարմիր Բանակը: (Բուռն ծափահարութիւններ):

Կեցցե՛ր Լենինի—Ստալինի մեծ կուսակցութիւնը՝ սոցիալիզմի բոլոր հաղթանակների կազմակերպողը: (Յերկարատև, յերկար ժամանակ չլող ծափահարութիւններ):

Կեցցե՛ր մեծ դործի մեծ առաջնորդ ընկեր Ստալինը: (Նվագախումբը նվագում է «Ինտերնացիոնալ», բալորը վառփի յեն կանգնում և ովացիա յեն սարքում ի պատիվ ընկեր Ստալինի):



I. ԽՍՀՄ ներքին զարգացումը	4
II. Միջազգային դրույթունք և ԽՍՀՄ	11
III. Մեր խնդիրները	21

Հայերեն թարգմանության խմբագիր Բ. Ն. Գավթյան
 Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
 Մրբագրիչ Հ. Մանվելյան
 Կանտու սրբագրիչ Լ. Արվյան

Գլավիտի լրագրք №4—3329, հրատ. № 628

Պատվեր № 176, տիբաժ 15.000

Հանձնվել է արտադրության 25/XI 1938 թ.

Ստորագրվել է տպագրելու 4/XII 1938 թ.

Գինը 20 կ.

Պետհրատ—Փառաքական գրականության հրատարակչության տպարան
 Ֆերեան, Ալավերդյան № 65

«Ազգային գրադարան»

 NL0397162

9432 20 4.

В. М. МОЛОТОВ

21-ая ГОДОВЩИНА ОКТЯБРЬСКОЙ
РЕВОЛЮЦИИ

Арига--Издательство полвт.
литературы, Ереван, 1936